մէկուն առանձին ելեքտրաբեր դնենք, որ գործողութիւնը շուտով լմննայ, որով և զինկին մաշելու ժամանակը կը կարճի, և երբոր առանձին գուռ հաստատենք ամէն մէկ կաղապարին, որով իւրաքանչիւրը իբրև մէկմէկ պարզ կազմարաններ մէկտեղ բերած քարդին զօրութիւնը կ'աւելցընեն։ Այս գուռներուն չափաւոր թիւը վեցն է։

Նկ. 4.



14. (Նկ. 4) Ա-ը քարդն է։ Իսկ Բ մնտուկը վեց կտոր բաժնուած է ծակոտկէն միջնափակներով։ Այս այս միջնափակներուն ամէն մէկուն վրայ հեծցուցած է հինգ հատ մետաղային թելեր ա, ա, ա, ա, ա, որոնց իւրաքանչիւրին մէկ ծայրը է, է, .. կաղապարները կախուած են, և մէկալ ծայրն ալ է, է, .. լուծանելի ելեքտրաբերներ, և երկուքն ալ հեղանիւթին մէջ թաթխուած. և ամէնն ալ նոյն դրքով կախուած, անանկ որ նոյն խորշին մէջ մէկուն պղինձը և մէկալին կաղապարը գըտուի։ — Արդ ամէն բանէ առաջ, երբոր պիտի սկսիս գործածել, Բ մնտուկին ամէն խորշերը ուզած աղային հեղանիւթով լեցու, ինչպէս ըսինք պղնձի ծծմբուտով, և Ա վոլդայեան քարդն ալ շտկէ. վերջը նախ Պ պղնձէ դրական բևեռը հաղորդէ Բ առջի խորշին մէջ է ելեքտրաբերին հետ, և Զ զինկի մերժական բևեռն ալ Դ վերջին խորշին հետ, և կախէ հոն շուտ մը է կաղապարը. երկու բոպէի մէջ կը տեսնես որ կաղապարին երեսը պղնձով կը ծածկուի, և ալ հեղանիւթէն չմաշիր (§. 7 ծան.)։ Այս որ եղաւ, հանէ անկէ նոյն թելին ծայրը որ երկու ծայրի խորշերը իրարու կը հաղորդէր, և անոր քովի խորշին մէջ խոթէ, և առջի էակ թելն ալ կախէ իր կաղապարովը և պղինձ թիթեղովը. քանի մը վայրկեանէն կը տեսնես որ այս նոր կաղապարն ալ կը ծածկուի բարակ պղինձ մաշկով մը։ Այնպէս ըրէ երրորդ խորշին, չորրորդին, ինչուան վերջը։

15. Գիտնալու է որ գուռերուն թիւը աւելցընելով լուծման զօրութիւը նուազեցընելու է անոր համեմատ շատ ջուր դնելով. և որպէս զի դիւրահաղորդ ալ ըլլայ, թթուն աւելցընելու է։ Այս դարձեալ որչափ կարելի է նայելու է որ պղնձէ թիթեղները և կաղապարները իրարու մօտ դրուին։ Այդպիսի միաղոյդ քարդ մը կրնայ վեց կաղապար երեք օրուան մէջ ձուլել, թէ որ քիչ մը տաքցուցած ըլլայ։ Այս բանիս համար մի միայն յարմար է Լուսլասդրնի մարտկոցին խորշաւոր անօթը գործածել, որ ընդհանրապէս տասուերկու բաժնած է. բայց կրնայ այսպէս գործածուիլ. կէսը մէկ քարդով, կէսն ալ ուրիշ քարդով, որով 24 կաղապար մէկէն կրնայ հանուիլ մէկ շաբթուան մէջ։ Այլ այս թէ որ չըլլայ, կրնայ փայտէ շինուիլ և վերնիճոտուիլ։ Որով բանիս, այս կերպիս ինայողութիւնը այն աստիճանի է, որ ամենուն յայտնի կ'երևայ. վասն զի իւրաքանչիւր կաղապարին վերայ որ մէյմէկ ունկի պղինձ նստի, անդին ամենուն համար մէկ ունկի զինկէն ալ աւելի չմաշիր, թէպէտ քիչ կամ շատ է եղեր կաղապարներուն թիւը։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Թէ որ կ'ուզես վարդ ստանալ, պէտք ծառաները ջոգուր։

Օր մը Ֆոնդընէլ գաղղիացի մատենագրին բարեկամներէն մէկը իրեն այցելութեան կու գայ. և տեսնելով որ Ֆոնդընէլ տխրած չփոթած մտածման մէջ է, կը հարցնէ. Բարեկամ, ինչ ունիս՝ որ այդպէս այլայլած կը տեսնեմ զքեզ։ — Ֆոնդընէլ՝ ինչ պիտի ունենամ, կ'ըսէ. ծառայ մը ունիմ տանս մէջ՝ այնպէս հոգիս բերանս կը բերէ, որ կարծես թէ քան ծառայ բռնած եմ։